Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 4 -ի N 212 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը մշակվել է համաձայն Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի:

Ծրագիրը նախատեսում է ապահովել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ուսումնական և տեղեկատվական կայքերի մշակման և սպասարկման ծրագիրը, սահմանում է պատասխանատու մարմինները և սպասվող արդյունքները:

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի ավելի քան հարյուր երկրների հայ համայնքներում գործող սփյուռքյան տասնյակ հազարավոր կազմակերպությունների՝ հոգևոր կառույցների, բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների, մշակութային և կրթական կազմակերպությունների, կուսակցությունների, հայագիտական կենտրոնների և ամբիոնների, գրախանութների, գրադարանների, մասնագիտական միությունների, ճանաչված սփյուռքահայերի և անհատ բարեգործների իրականացրած հայապահպան հսկայածավալ գործունեությունը կարիք ունի հավուր պատշաճի լուսաբանման և ներկայացման:

Միևնույն ժամանակ այս բոլոր կազմակերպությունները և միլիոնավոր մեր հայրենակիցներ, կտրված լինելով Հայաստանից, կարիքն ունեն գոնե առցանց ներկա լինել «հայկական աշխարհում» և վերջինիս կարևոր մաս կազմող հայկական «առցանց մշակութային միջավայրում»: Հայկական «առցանց մշակութային միջավայրի» կարևորագույն բաղադրիչներից են՝ համահայկական տեղեկատվական պորտալները, հայալեզու և հայաբովանդակ էլեկտրոնային գրադարանները, ինչպես նաև լեզվական և քերականական առանձնահատկություններ ունեցող հայության տարբեր հատվածների փոխըմբռնումը դյուրինացնող ամենատարբեր ծրագրային գործիքները:

«Առցանց հայկական մշակութային միջավայրի» ստեղծումն էապես կնպաստի սփյուռքյան կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցությանը:

II. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Հայերն այսօր» ամենօրյա էլեկտրոնային պարբերականը գործում է 2009 թվականի մայիսից: Պարբերականի հիմնական նպատակը Հայաստան-սփյուռք ընդհանուր լրատվական դաշտի ստեղծումն է, Հայաստան-սփյուռք կապի ամրապնդմանը նպաստելն է, տեղեկատվական ընդհանուր միջավայրի ձևավորումն է, աշխարհի տարբեր երկրներում հրատարակվող հայկական մամուլի և էլետրոնային լրատվամիջոցների միջև տեղեկատվության փոխանակման կազմակերպումն ու համագործակցության հնարավորությունների ընդլայնումն է, ինչպես նաև սփյուռքի հայկական համայնքներում կատարվող մշակութային, քաղաքական, տնտեսական իրադարձությունների, սփյուռքում ապրող մեր հայրենակիցների դժվարությունների և ձեռքբերումների, հայկական կառույցների աշխատանքի, աշխարհի տարբեր երկրներում բնակվող ճանաչված, տարբեր բնագավառներում լուրջ հաջողությունների հասած հայերի մասին օպերատիվ և որակով տեղեկացումն է:

2. Սփյուռքում հայոց լեզվի պահպանման և տարածման խնդիրն օրակարգային է։ Սփյուռքահայության ստվար հատվածը չի տիրապետում կամ մասնակիորեն է տիրապետում մայրենի լեզվին։ Գրականությունը հաճախ արևելահայերեն է և աբեղյանական ուղղագրությամբ, որին սփյուռքահայության ստվար մի զանգված վատ է տիրապետում, ինչն էլ լրացուցիչ խոչընդոտ է սփյուռքի տարբեր հատվածների և հայրենիքի միջև շփման համար։

3. Սփյուռքում հայալեզու տպագիր գրականության ոչ բավարար քանակը կարող էր լրացնել համացանցը, սակայն, ցավոք, հայերենով տեքստերի քանակությունն ինտերնետում չափազանց քիչ է, ինչը թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքի օգտվողներին հնարավորություն չի տալիս մնալ հայկական միջավայրում։ Գրեթե բացակայում են հայկական էլեկտրոնային գրադարանները, ինչի պատճառով էլ սփյուռքի մեր հայրենակիցները, հատկապես նրանք, ովքեր չեն ապրում հայաշատ և խիտ բնակեցված համայնքներում, հիմնականում կտրվում են հայկական միջավայրից՝ հայկական մշակույթից, գրականությունից, արվեստից, ազգային արժեքներից։

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. «Հայերն այսօր» բազմալեզու էլեկտրոնային պարբերականի հրապարակման շարունակականությունը կամրապնդի սփյուռք-սփյուռք և հայրենիք-սփյուռք կապերը, կընդլայնի աշխարհասփյուռ հայերի համագործակցության հնարավորությունները և կսերտացնի միջհամայնքային կապերը։ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների կողմից իրականացված ազգապահպան ձեռնարկների մասին տեղեկատվությունը հասանելի կդառնա աշխարհասփյուռ հայությանը։

2. Սփյուռքի հայ համայնքներում հայոց լեզվի երկու հատվածների փոխըմբռնման նպատակով 2009 թվականին իրականացվել են համացանցում արևելահայերենից արևմտա-

հայերեն և հակառակը փոխարկչի ծրագրի տեղադրման աշխատանքները, սակայն այս ծրագիրն ունի շարունակական զարգացման և սպասարկման կարիք։ Այս պահին ծրագիրն աշխատում է 35000 բառի սահմաններում։ 2010 թվականի ընթացքում փոխարկչի ծրագրի բառապաշարի մեծացումն ու ալգորիթմական բազայի կատարելագործումն էլ ավելի կբարձրացնի ծրագրի արդյունավետությունը։

3. Համահայկական հայալեզու գրադարանի ստեղծումը մեկն է այն պայմաններից, որոնց առկայության դեպքում աշխարհի ցանկացած կետում գտնվող հայը, ցանկության դեպքում, կկարողանա ապրել և գործել «վիրտուալ հայկական աշխահում»՝ հայկական տեղեկատվական, մշակութային, կրթական միջավայրում։

Համահայկական էլեկտրոնային գրադարանում հաշվի կառնվեն արևելահայերեն և արևմտահայերեն գրական ժառանգության առկայությունը, ժամանակակից և դասական ուղղագրությունները։ Էլեկտրոնային գրադարանի շտեմարանները մշտապես կհամալրվեն Հայաստանի, Արցախի, սփյուռքի դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործու-թյուններով և աշխատություններով։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով կիրականացնեն «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի 2010 թվականի հրապարակման, արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկչի ծրագրի շարունակական զարգացման և սպասարկման, համահայկական էլեկտրոնային գրադարանի ստեղծման և սպասարկման աշխատանքները։

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

«Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի 2010 թվականի հրապարակման, արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկչի ծրագրի շարունակական զարգացման և սպասարկման, համահայկական էլեկտրոնային գրադարանի ստեղծման և սպասարկման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին, որի համար պահանջվող գումարը կազմում է 30.304.000 դրամ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ